Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի
նախագահ Արա Զոհրաբյան
07.06.2017թ. թիվ 148-Լ որոշման

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

1. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Սույն ծրագրի հիմնական նպատակն է աջակցել երիտասարդ փաստաբաններին՝ մասնագիտական ոլորտում արագ ինտեգրվելու համար:

Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը երիտասարդ փաստաբաններին տրամադրում է աշխատասենյակ, որը կարող է օգտագործվել միայն փաստաբանական գործունեություն իրականացնելու նպատակով:

2. ԾՐԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

Պալատ- *Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ.*

Աշխատասենյակ- *ք. Երևան, Զաքիյան 2, 2-րդ հարկ, թիվ 9 սենյակ.*

Երիտասարդ փաստաբան- *սույն ծրագրի իմաստով երիտասարդ փաստաբան է համարվում այն փաստաբանը, ով փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել Շահառուների ընտրությունը կատարելու օրվան նախորդող երկու ամսվա ընթացքում և որի արտոնագրի գործողությունը կասեցված չէ.*

Շահառու- *Աշխատասենյակում փաստաբանական գործունեություն իրականացնելու հնարավորություն ստացած երիտասարդ փաստաբան.*

Հանրային պաշտպանի գրասենյակ- *Պալատի հանրային պաշտպանի գրասենյակ.*

Անվճար ծրագիր- *Անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ ծրագիր.*

Երիտասարդական խորհուրդ- *ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդ.*
Ընթացակարգ- *Երիտասարդական խորհրդի կողմից սահմանված Աշխատասենյակից օգտվելու կարգ.*
Կիսամյակ- *սույն ծրագրի իմաստով կիսամյակ է համարվում՝ տվյալ տարվա հունվար-հունիս կամ հուլիս-դեկտեմբեր ամիսների ժամանակահատվածը:*

3. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

3.1. Աշխատասենյակից օգտվելու հայտ կարող է ներկայացնել այն երիտասարդ փաստաբանը, ով՝
- որևէ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ չի գտնվում, բացառությամբ գիտական և/կամ մանկավարժական բնագավառում ծագած աշխատանքային հարաբերությունների, և
- չունի աշխատասենյակ, և
- համաձայնվել է սույն ծրագրի և Ընթացակարգի պայմաններին, և
- բավարարում է Ընթացակարգի պայմաններին:

3.2. Աշխատասենյակը նախատեսված է 20 (քսան) Շահառուի լիարժեք օգտագործման համար: Երիտասարդական խորհրդի որոշման հիման վրա Աշխատասենյակը կարող է տրամադրվել 20-ից ավել Շահառուի՝ Ընթացակարգով նախատեսված դեպքերում և կարգով:

3.3. Յուրաքանչյուր Շահառու իրավունք է ստանում Աշխատասենյակից օգտվել մեկ կիսամյակ ժամկետով:

3.4. Սույն ծրագրի պահանջներին համապատասխան Աշխատասենյակից օգտվելու կարգը (Ընթացակարգը) սահմանում է Երիտասարդական խորհուրդը:

3.5. Ընթացակարգը պետք է պարունակի՝
- Հայտը ներկայացնելու ժամկետները և կարգը.
- Շահառուների ընտրության կարգը.
- Աշխատասենյակն օգտագործելու կանոնները.
- Անվճար ծրագրի պայմանները, այդ թվում՝ յուրաքանչյուր Շահառուի կողմից Անվճար ծրագրի շրջանակներում վարվող նվազագույն գործերի քանակը.
- Աշխատասենյակից օգտվելու իրավունքը դադարեցնելու հիմքերը և կարգը:

3.6. Երիտասարդական խորհուրդը հունիս և դեկտեմբեր ամիսներին հայտարարում է հայտերի ներկայացման և քննարկման ժամանակահատվածը:

3.7. Այն դեպքում, երբ Ընթացակարգով սահմանված ժամկետներում ներկայացված հայտերի քանակը պակաս է Երիտասարդական խորհրդի կողմից սահմանված Շահառուների քանակից, Երիտասարդական խորհուրդն իր նախաձեռնությամբ Աշխատասենյակը կարող է տրամադրել այլ փաստաբանների: Սույն կետով նախատեսված փաստաբաններին

աշխատասենյակը տրամադրվում է սույն ծրագրով և Ընթացակարգով սահմանված պայմաններով:
(ենթակետը լրացվել է 13.07.2017թ. թիվ 191-L, փոփոխվել է 04.06.2018թ. թիվ 235-L)

4. ԱՆՎՃԱՐ ԾՐԱԳԻՐԸ

4.1. Հասարակությանն անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով, Աշխատասենյակն օգտագործելու ժամակահատվածում, յուրաքանչյուր Շահառու կիսամյակի ընթացքում համաձայնվում է Հանրային պաշտպանի գրասենյակի առաջարկով անվճար իրավաբանական օգնություն տրամադրել քաղաքացիներին՝ Ընթացակարգով սահմանված գործերի քանակով՝ Երևան քաղաքում:

4.2. Երիտասարդական խորհուրդը սահմանում է անվճար գործերի քանակը, հաշվի առնելով՝
- Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կամ տեղակալի գրավոր առաջարկությունը.
- Մասնագիտական ուղղվածությունը (քրեական կամ քաղաքացիական/վարչական):

4.3. Երիտասարդական խորհրդի կողմից սահմանած անվճար գործերի քանակը չի կարող գերազանցել Շահառուի աշխատաժամանակի **20 (քսան) տոկոսը**: Սույն կետի իմաստով Շահառուի աշխատաժամանակ է համարվում կիսամյակի ընթացքում Շահառուին տրված Աշխատասենյակն օգտագործելու հնարավորության ժամանակահատվածը՝ անկախ այն փաստացի օգտագործելու հանգամանքից:

4.4. Սույն ծրագրի 4.1 կետում նշված իրավաբանական օգնությունն ապահովելու նպատակով Շահառուի և Պալատի միջև կնքվում է պայմանագիր:

4.5. Անվճար իրավաբանական օգնության տրամադրման համար անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաներն ապահովում է Պալատը:

4.6. Անվճար իրավաբանական օգնության տրամադրման հետ կապված ճանապարհային ծախսը ենթակա չէ հատուցման Պալատի կողմից:

4.7. Աշխատասենյակն օգտագործելու ժամանակը լրանալուց հետո Շահառուն հանձնման-ընդունման ակտով հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին է վերադարձնում ստացված գործերը:

5. ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1. Աշխատասենյակն ապահովված է՝
- 20 (քսան) հատ աշխատասեղանով.
- 20 (քսան) հատ պահարանով.
- 20 (քսան) հատ դյուրակիր համակարգչով.
- առնվազն 2 (երկու) բազմաֆունկցիոնալ տպիչ սարքով (տպիչ, պատկերամուտ և պատճենահանող սարք):

5.2. Աշխատասենյակի տեխնիկական սպասարկումը (բացի բջջային և միջազգային հեռախոսակապից), այդ թվում՝ մաքրության, կոմունալ ծառայությունների և ինտերնետ կապի ապահովումն իրականացնում է Պալատը:

5.3. Աշխատասենյակից կարելի է օգտվել երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ օրը՝ ժամը 10.00-ից մինչև 18.00-ը: Ոչ աշխատանքային օրերին, կամ ժամը 18.00-ից հետո Աշխատասենյակից կարելի է օգտվել բացառիկ դեպքերում, Պալատի նախագահի տեղակալի թույլտվությամբ:

5.4. Շահառուն իր վստահորդներին կարող է ընդունել այդ նպատակով հատկացված ընդհանուր տարածքում:

5.5. Շահառուն պարտավոր է Աշխատասենյակն օգտագործել սույն ծրագրի, ինչպես նաև Ընթացակարգի պայմանների համաձայն:

5.6. Աշխատասենյակի օգտագործման հետ կապված խնդիրները, այդ թվում՝ Շահառուների միջև Աշխատասենյակից օգտվելու հետ կապված վեճերը և Աշխատասենյակից օգտվելու իրավունքը դադարեցնելու հարցը լուծում է Երիտասարդական խորհուրդը:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն ծրագրի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է Պալատի նախագահի տեղակալի կողմից: Երիտասարդական խորհրդի կողմից սույն ծրագրի հետ կապված անհրաժեշտ որոշումները քվորումի բացակայության կամ այլ պատճառով չընդունվելու դեպքում, այդ որոշումներն ընդունում է Պալատի նախագահի տեղակալը:

6.2. Շահառուները պարտավորվում են պահպանել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 22.09.2014թ. թիվ 152-Լ հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի շենքի էլեկտրակայանքների շահագործման և անվտանգության կանոնները, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի շենքում գտնվող համակարգիչներից օգտվող անձանց աշխատանքի կազմակերպման, շահագործման և անվտանգության ապահովման կանոնները, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի շենքում գտնվող զուգարանների շահագործման սանիտարական և հիգիենիկ կանոնները, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի շենքում հրդեհային անվտանգության կանոնները:

6.3. Աշխատասենյակն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել նաև Պալատի կարիքների համար՝ ոչ ավել քան վեց օր մեկ կիսամյակի ընթացքում:

6.4. Սույն ծրագիրն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունիսի 7-ից: